

6504

6505

6506

6507

6508

6509

6510

Chapman

1947-1948

151-157

777

Handy 62

2011

1. Անոթպետն և թուլութեամբ հիւանդացիներ
Թաւրիս 1904.
2. Երեւոյցի Օ. «Անոթպետն» Թաւրիս 1904
3. Անոթպետն և յարաւեցիներն Նոր-
Գաւիթի ճեմարան 1899
4. Անոթպետն և Ասորիներն Թիֆլիս 1893.
5. Անոթպետն և Երեւոյցի Նոր-Գաւիթի ճեմարան
1893.
6. Անոթպետն և Բերսեւի Անոթպետն
Նոր-Գաւիթի ճեմարան 1899
7. Անոթպետն և Բոր-Կոնիս Թիֆլիս 1898

ԲԵՐԿԷ

Printed in Turkey


ԱՏՐՊԵՏ

891.99
Ա-81
ԱԿ.

100

ՈՒԼՈՒԽԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2 003




ՆՈՐ ՆԱՄԻՋԵԻԱՆ
Տպարան Եզր. Ս. և Յ. Աազիաննիբի.
Типография Бр. А. и С. Аваковых.
1899.

Printed in Turkey

595
N 31 1895

ՌԻՏԻՆԻՍ


Дозвол. цензурою С-ть Петербургъ, 19 Января 1899 года.



151-2015

էջ 151


439
39
A



Printed in Turkey

ԹՈՒԼՈՒՄԻԱԶԻՆԵՐ

Գրքերի արտատպման մասին... արտատպման գործի կազմակերպման... հասկանալի և պարզապես... արտատպման գործի կազմակերպման... հասկանալի և պարզապես...



Պոլի ազգաբնակից թիւնը գործելու մի ասպարէզ ունէր, որտեղ մարդիկ բոլորովին հաւատարեւ էին, որտեղ ամեն մի անհատ մի և նոյն իրաւունքներն էր վայելում, որտեղ իրար չէին հարցնում, թէ ինչ ծագումն էին պատկանում: Մշակ, արհեստաւոր, վաճառական, վարժապետ, գրագէտ, զինուորական, կալաթատէր, գրագիր, կրօնական՝ ամենքն անոնց խտրութեան հաւարեւում էին և միասին գործի կաշուում: Այդտեղ անխտիր, բոլորը հաւասար ձայնով ընտրում էին իրենց առաջնորդ կամ ուրիշ գործավարներ, այդտեղ արժանաւորութիւնը ոչ թէ փողի ու գիտութեան, այլ ֆիզիկական ոյժի, խելքի և ծրագլխութեան մէջ էր կայանում: Այդ ասպարէզը թուրումբաճիւղիւթիւնն էր (հրէշներ):

Թուրումբաճիւղիւթիւնից խոյս էին տալիս վախկոտները, թուրաոյրները և անզգաները, որոնք յայտնի բան է, քաղաքի ազգաբնակիցութեան մեծազոյն ատուկն էին կազմում և որոնցից իրար չէին փոխ նշելիլ (իւր-իւրու գործի կազմակերպման մասին):

Թուլասիրտ քաղաքացիները թուլումբաշիններից խոր-
չելու պատճառն այն էր, որ առաջինները իրենց աներկիւղ
ընթացքով միշտ սարսափի ու սրտադողի մէջ էին թողել
վերջիններին: Թուլումբաշիններն՝ ինչպէս աներկիւղ կրակն
ու բոցն արհամարհելով՝ մտնում էին ծխալի աներ՝ երե-
խաներին, չափահասներին ու պառաններին դուրս բերելու,
կրակից ազատելու թանգագին կահկարասիքը, անխնայ
քանդում էին հարեան աները, հրդեհի առաջն առնելու
համար ջրհանները շալակած, կռում էին անհրաշուհ թո-
ցերի հեղեղի հետ, այնպէս էլ անվախ միշտ յարձակում
էին էֆէնդիների, գատաւորների, աղաների, ամիրաների
վրա, հայհոյելով, նախատելով, ծաղրելով, պակասութիւններն
երեսներովն էին տալիս և սպառնալիքներով ստիպում
իրենց հրամանները կատարելու և հպատակելու:

Աղաներից հալածւածը միշտ դիմում էր մի յայտնի
թուլումբաշու, պարզում էր նեղութիւնը: Թուլումբաշին
գործին ծանօթանալուց յետոյ, մի օր փողոցի մի անկիւ-
նում բռնում էր աղային և ստիպում բաւարարութիւն
տալ նեղւածին: Ամիրան, մահւան երկիւղից անճրկած,
կատարում էր թուլումբաշու հրամանը, մտքի մէջ հազար
ու մի հայհոյանք թափելով թուլումբաշու գլխին:

Մի անգամ մէկ կաշառակեր դատաւոր. խօսք էր տւել
մի վաշխաուի, իւր վճիռքով խել մի թշուռ պարտիկպանի
պարտիգակը, որով կերակրում էր իննը հոգուց բաղկացած
ընտանիքը: Պարտիկպանը յուսահատ ընկնում է մի ծանօթ
թուլումբաշիի ստքերը և վշտաբեկ սրտով նկարագրում
իրեն սպառնացող սոսկալի վիճակը: Թուլումբաշին հետևում

է դատաւորին և կէս գիշերին կտրում նրա ճանապարհը: Գա-
տաւորը հոգէառի ջլոտ, հաստապինգ բաղուկների համե-
անած, կրկին անգամ նրան չքաթատահելու համար, դեռ մի
գումար էլ վճռում է վաշխաուից առնել յօգուտ պարտիկ-
պանի: Ամիրայի մէկը, որ իւր բազմութիւ ծառաների և
սարուկների վրա վտահացած՝ արհամարհում է թու-
լումբաշիին և սպառնում է դեռ նրան դատաւորանի կան-
չել. թուլումբաշին առանց այլ և այլի տալիս է կրակը՝
այրում է ամիրայի պալատը և օգնութեան հասած թու-
լումբաշիների խումբը աւելի հանդիսատեսի դեր է կա-
տարում, աւարի է տալիս ամիրայի կայքը, քան թէ օգնու-
թեան հասնում: Այս պատճառները ամենաբռնաւորների
անգամ ստիպել էին խոնարհելու թուլումբաշիութեան
գօրութեան առաջ:

Կ. Պոլսում վաղ ժամանակներից մինչև վերջերս կային
միայն թաղական և ընկերական՝ ենիշարութիւնից մնացած՝
թուլումբաշիների խմբեր. քաղաքական, կամ պետական
խումբ սովորաբար չէ պահել: Կ. Պոլսում պատահած
գարհուրելի հրդեհների մասին տեղեկութիւն ունեցողը կը
հասկանայ, որ առանց այդպիսի թաղական թուլումբաշի-
ների խմբերի, որքան դժւար կ'լինէր, Կ. Պոլսի նման մի
մեծ քաղաքում, աղէտների ժամանակ աղգարնակութեան
օգնութիւն հասցնելը: Նամանականոց հին ժամանակները,
երբ կատաղած ենիշարիները, իրենց առաջնորդներից վրէժ
լուծելու, կամքերը առաջ տանելու ուրիշ միջոց չէին գտ-
նում, կրակի, հրդեհի օգնութեան էին դիմում: Առաջ ենի-
շարիներ էլ եղել են այդ խմբերում, որով թուլումբաշի-

ութեան անունը Կ. Պոլսիցիներին էլ աւելի սոսկումի, սարսափի և սրաադողի մէջ է թողել:

Քայց և այնպէս ժողովրդի հալածած մասը՝ արհեստաւոր և օրական աշխատանքով հազիւ ապրողները, փողոցներում տէփուրը գլխին ձուկ, կանանչի, միրգ, շիզեար, ոտ ու գլուխ ծախողները միշտ յարգել են թուլումբաջուն, անընդհատ աշխատել են նրան օգնել, միշտ ձգտել են ժրջանութիւնով մտնել այդ խմբերի մէջ, որն իրենց անվերջ պաշտպան է կանգնել ամեն տեսակ աղէտների ժամանակ:

Այս իսկ պատճառով ենիշարական կոտորածից յետոյ էլ մնացել էր և մինչև վերջերս էլ կար թաղական թուլումբաջիութիւնը և բուրժուազիան արհամարհանքով, օրականով ապրողներին՝ բոլորին տալիս է «թուլումբաջի» տիտղոսը, որը կրողներն իրենց մեծ պատիւ են համարում:

Ահա այսպիսի երկու հայկական թուլումբաջիական խումբ կային 1882 թականներին Իսկիւտարի Սէլամսըզ և Ենիմէհլէ թաղերում, որոնք շնորհիւ իրենց առաջնորդների՝ Կադ-Մքօի և Կարճ-Նազարի ժրջանութեան, իրենց հարևան թուրք, յոյն և հրէայ թուլումբաջի խումբերի նախանձն էին բորբոքում:

Կադ-Մքօն, որ սովորական մահկանացուներից չէր, Փարիզ, Լոնդոն և Սմիրնիկա տեսել, գլխում կուտակել էր գիտութեան մեծ պաշար, և ս. Խաչ եկեղեցու թաղական ուսումնարանում տեսուչ էլ էր, Սէլամսըզի թուլումբաջիների օջախի առաջնորդութեան արժանացել էր, իւր մի քանի տարւայ ընթացքում կատարած անթիւ զոհողութիւններով:

Նա իւր կադ ոտքով շատ անգամ ուսը տեղ էր ջրհանի տակ և իւր երեք վիթխարի ընկերների հետ ժամերով վազել մինչև աղէտների տեղերը: Նա յաճախ կրակի բոցերի մէջ խանձել էր մաղերն ու միրուքը, ծխի մէջ կուրացնելով աչքերը և շնչասպառ խեղդելով, դուրս էր բերել հրդեհած տան խորքերից երեսաներով օրոցներ, վերմակներով փաթաթած հիւանդներ, թանգազին նկարներ, գրքեր և անփոխարինելի նիւթեր: Հրդեհների ընթացքում նրա կարգադրութիւններն այնքան օգուտ էին բերել ազգաբնակչութեան, որ սրանց համարումը Կադ-Մքօի մասին օրից օր մեծացել էր և երիտասարդութիւնը, նամանաւանդ արհեստաւոր և չքաւոր դասակարգը նրան համարեա թէ պաշտում էին:

Կադ-Մքօն աւելի խոնարհեցնում էր թէ հարուստներին, թէ ծառայողներին և թէ ընկերակիցներին իւր չափազանց անշահասիրութիւնով և մանաւանդ արդար վճիռներով: Թուլումբաջիները ստանում էին երբեմն երբեմն հարուստ կալածատէրերից նւէրներ և աղէտից ազատուող մեծատունները խոշոր գումարներով վարձատրում էին նրանց: Կադ-Մքօն ոչ միայն մաս չէր աւնում այդպիսի եկամուտներից, այլ կարիք չունեցողներին էլ, իւր օրինակով, ստիպում էր հրաժարել և գումարները հաւասարապէս, կամ արժանաւորապէս բաժնում էր կարօտեալների մէջ, այնպէս որ բոլոր ընկերները համողմունքով գոհ էին մնում նրա կարգադրութիւնից:

Կադ-Մքօի ժրջանութիւնով շատ մեծացաւ, Սէլամսըզի թուլումբաջիների խումբը և նախկին մի մաշած, անպէտք

Ջրհանի փոխարէն չորս նոր լաւ Ջրհաններ ձեռք բերին՝ հրդեհի վերաբերեալ բոլոր պարագաներով: Դեռ այդ բաւական չէր, Կաղ-Մքօն ստում էր, որ աշխատինք, մի յարմարաւոր տեղ գնենք թաղի կենտրոնում, հրէջ գործիքներէ համար: Նա մտածում էր այդ տան կողքին մի աշտարակ էլ շինել, որտեղից փոխընդփոխ հսկել և փոխանակ մունետիկի ձայնին սպասելու, իսկոյն այդտեղից նշան տալ թուլումբաջիներին, հրդեհածներին օգնութեան հասնելու:

Կարճ-Նազարը, որ նոյնպէս Կաղ-Մքօի նման զարգացած և նրա նման անձնէր էր գործին, կառավարում էր ենիմէհլէի թուլումբաջիներէ խումբը: Նա ս. Կարապետ եկեղեցու թաղական խորհրդի անդամ և «Տիեզերք» ամսաթերթի խմբագիրն էր: Կարճ-Նազարը՝ հարուստ մարդու որդի լինելով և իւր ծնողներէջ բաւական յայտնի կալածներ ժառանգելով, ոչ միայն հանգիստ կարող էր ապրել, այլ մի ուրիշ պարսպամունքով նա կարող էր զեռ մի քանի անգամ էլ բազմապատկել կարճ ժամանակամիջոցում իւր կապիտալը, բայց նա, ոչ միայն հայ խմբագրի տաժանելի պաշտօնն էր ստանձնել և իւր եկամուտներով գիտնական թերթը ապում ու ցրում էր ժողովրդի մէջ, ուսումը, գիտութիւնը, առաջադիմութիւնը տարածելու նպատակով, այլ իւր եկամուտներէջ մի մասն էլ հանում էր թշառ ընկերակիցներին, Եւրոպայում ուսանողներին:

Կարճ-Նազարն էլ անձամբ կուում էր արէտներէ ժամանակ կրակի, ծխի, ջրի և Ջրհանի հետ, եւ չէր մնում համալից, ձկնորսից, կօշկակարից և գարնից, այնպէս որ

նրա արարքները Կաղ-Մքօից աւելի նախանձելի էին, հենց նրա համար, որ Կաղ-Մքօն, որպէս նախկին Մշի դաշտի որդի, մանկութիւնից սովորած էր չարքաշութեան, իսկ Կարճ-Նազարը փափուկ կեանքից իջել, մտել էր թուլումբաջիների շրջանը: Երբ Կարճ-Նազարը Ջրհանի խողովակը և մուշտուկը ձեռքին բարձրանում էր հրդեհած տան կտուրը և հսկայի նման կամոգնելով՝ անեղաշունչ բոցերի մէջ՝ կուում ու խրախոյռ էր կարգում ընկերներին, տեսողը չէր կարող երեակայել, որ այդ հերոսը դայեակներէ վերկերով՝ սայլակներով ու կաւքերով էր մեծացել և փափուկութիւնների մէջ զարգացել մանուկ օրերում:

Ժողովուրդը սիրում էր երկու խմբապետներին էլ. հրդեհից նեղածները, թշառները, օգնութեան կարօտները պաշտում էին երկու խմբի բոլոր թուլումբաջիներին: Վախկոտները, հարուստները գլխները թէքում էին երկուսի էլ առաջ, երկուսին էլ օգնում էին և երկուսին էլ մտքում հայհոյում, որ իրանց քաղկներից ազամայ գումարներ էին դուրս քաշում և սրանցից որի մօտ որ լինէին, նրան միւսից նախապատուութիւն էին տալիս: Երկու խմբերն էլ իրար յարգում, իրար օգնութեան հասնում էին, բայց իրար վրա, նոյնպէս նախանձում էլ էին: Նախանձը բարի էր և նրանք իրար հակառակ մեծացնում էին իրենց խմբերը, ուժեղացնում էին իրենց ջրհանները և հրէջ գործիքները, օրից օր կատարելագործւած տեսակներով փոփոխում, լրացնում և աշխատում էին աւելի կազմ ու պատրաստ լինելու, արէտի ժամանակ թշառներին օգնութեան հասնելու դիտումով:

Կարճ-Նազարի անունն աւելի հռչակեց իւր նորակազմ խմբով և Եւրոպայից նոր բերել տաժ ջրհաններով ու գործիքներով այդ օրերը Արշակեան գիշերօթիկ ուսումնարանում պատահած հրդեհի դէմ կատարած յարձակումով: Այդտեղ, գարհուրելի բոցերի մէջ, այնպիսի քաջասուրբեամբ շարժական սանդուխներից բարձրանում էր Կարճ-Նազարը և լուսամիտներից ներս մտնելով՝ երեխաներին գրկում իջեցնում էր փողոց, որ սրանչացնում էր հազարաւոր հանդիսականներին և արտասունքները սրբում, սրտերը խաղաղացնում թշուառ ծնողների ու հարազատների: Այդ գիշերը նրա խումբը այրելուց ազատել էր եօթանասուն ու հինգ աշակերտի: Այդ գիշերայ նրա հսկայական շարժումները այնպէս էր դրօշմել ներկայ եղողների սրտումն ու մտքումը, որ յաւիտեան ջնջւելու չէր այդ յիշատակը նրանց յիշողութիւններից: Այս հրդեհից յետոյ բաւական նսեմացաւ Կաղ-Մքօի աստղը:

Բայց և այնպէս, Կաղ-Մքօի քունը կտրւում էր, երբ Կարճ-Նազարը իրենից վազ էր հասնում մի հրդեհած տան օգնութեան: Կարճ-Նազարը նոյնպէս հանգստութիւնը կորցնում էր, երբ իրեն պատմում էին Կաղ-Մքօի մի նոր քաջագործութիւնը հրդեհի ընթացքում: Բացի այս, Սէլամսըզ թաղը կպած էր Ենիմէհլէին, այնպէս որ Կարճ-Նազարը և Կաղ-Մքօն Ենիմէհլէից անդամներ ունէին և որովհետև թուլումբաջիների գործունէութիւնը սահմանափակած չէր միայն իրենց թաղերով, այլ ազատ, ով կարողանում էր, առաջին անգամ մտնում էր հրդեհած փողոցը և գործի ձեռնամուխ լինում, միւսն էլ հասնում էր օգնու-

թեան. այդ պատճառով, անդադար մէկը միւսից առաջնութիւնը խլելով, կատողեցնում էին խմբապետներին:

Այս բարի նախանձը օրէց օր սա տկանում էր և ատելութեան փոխում: Սկզբում երկուսն էլ սառնարիւն էին քննում գործը, որովհետև երկուսի նպատակն էլ միևնոյն էր, այսինքն իրենց թաղեցիներին և հարևան բնակիչներին օգնութիւն հասնել հրդեհների ժամանակ, ձգտում էլ էին մի կերպ միանալ: Այդ բանը պահանջում էին թուլումբաջիները և նոյն իսկ թաղեցիները, բայց հենց այդ միութեան ձգտման, էլ աւելի հեռացնում էր նրանց, որովհետև հասարակական գործը այդտեղ զոհւում էր անձնականին: Խմբապետները երկուսն էլ ցանկանում էին իրենց առաջատուութիւնները պահպանել և այնքան մեծ էր նրանց ետը, որ նրանցից ոչ մէկը չէր կարողանում զիջանել:

Կաղ-Մքօն միշտ կրկնում էր իւր շրջանի թուլումբաջիներին.

— Եղբայր, այնքան տարւայ աշխատանքներ տանենք ծովը թափենք: Այդ փափկասուն աղայական դուակը թուլումբաջիութիւն պիտի անէ, մենք էլ պիտի տեսնինք: Թող երթայ, իր «Տիեզերքը» խմազրէ և ստանաւորներ զրէ. ինչ գործ ունի կոշա ու կոպիտ թուլումբաջիների հետ: Նա դեռ երեխայ է, նրա ընկերները խակ մարդիկ են, նա իսկական հրդեհ դեռ չէ տեսել, թեթև կրակների մէջ մըտնումէ, գիտէ՞ թէ մեծ բան է անում: Ես համարում եմ, որ մի օր, մի մեծ կրակի ժամանակ, իրեն անխելք ընթացքով, խումբը կրակի մէջ պիտի թողնէ, դուցէ՛ ինքն էլ մէջը մնայ: Ես չեմ կարող այդպիսի տղայական բնաւորութիւն

ունեցող մարդու, տասն տարեան մէջ պատրաստած թու-
լումբաջիններս հաւատայ: Մէկ դուրս բերէ; մէկ հաշւէ
տեսնենք ինչ մարդիկ ունի, կամ թէ քանի իսկական մարդ
ունի: Հայրական կարողութիւնը ուտել, Եւրոպայում ուտում
ստանալ և կալածների եկամուտներով մարդիկ պահելը՝
պապս էլ կարող է անել, թող, թող ժողովրդականութիւն
գտնէ և ժողովրդի օգնութեամբ ձեռք բերէ իրեն կարևոր
գործիքները, այն ժամանակ ես կը խոնարհեմ նրա առաջ,
ես էլ նրան կը հնազանդիմ:

—Մենք աղաների հետ գործ չունինք, ստրկանալ
չգիտենք, դռում էին Կաղ-Մքօի խմբի գլխաւոր անդամ-
ները, մենք ազատ-անկախ գործել ենք տարիներով և կը
գործենք ամենայետին մշակի, ձկնորսի ու կօշկակարի հետ:
Իսկական թուլումբաջինները մերկ օրունքով, բոբիկ ման
եկողներն են:

—Մեզ հետ է, պատասխանում էր Կաղ-Մքօն լուրջ
նայածքով, թաղի բժիշկը՝ ամենքին յայտնի Պր. Մսրլեանը,
մեզ հետ է թաղական խորհուրդը, որը միշտ բացել է ս-
Խաչ եկեղեցու ջրամբարները մեր խմբի առաջ, հրդեհների
ժամանակ, մեզ հետ են երկու թաղի էլ ամենախոհուն, ամե-
նահարուստ կալածատէրերը, որոնց յարգանքը միշտ վայելել
ենք: Վերջապէս մեզ հետ է ամբոխը, արհեստաւորները:
Եթէ այսպիսի ուժեր ունինք, մենք միշտ անկախ կարող
ենք գործել և կարիք չունինք Ենիմէհլէցոյ միութեանը:
Թող Կարճ-Նազարը մի քիչ թուշկոտի այս ու այն կողմը,
մինչև որ մի քիչ թեթեանայ քսակը, վերջը դարձեալ մերն
է, մենք ենք յաղթանակելու, քանի որ ժողովուրդը մեր
թուլումբաջիններին աւելի է սիրում:

Բայց և այնպէս Կաղ-Մքօն էլ, ընկերներն էլ տես-
նում էին, որ օրից օր աւելի ու աւելի ընդարձակում էր
և աւելի կատարելագործւած ջրհաններով պատրաստում էր
հրդեհների գէմ Կարճ-Նազարի խումբը, որի անդամների
թւի մէջ մտնում էին աւելի ուժեղ, աւելի վիթխարի մար-
դիկ: Դեռ այս բաւական չէր. Կարճ-Նազարը միացել էր
Վանքի-Բաղի՝ յոյն, Գուգոունճուզի՝ հրէա; Իջաղիէի՝
հայ, Բաղար-Բաշիի՝ արնաւուտ թուլումբաջինների հետ,
որոնք բոլորը մի առանձին յարգանքով էին վերա-
բերում Կարճ-Նազարի հետ և հրդեհների ժամանակ մշ միայն
իսկութեամբ օգնութեան էին հասնում իրարու, այլ հպա-
տակում էին Կարճ-Նազարի կարգադրութիւններին: Այդ
բոլորն էլ կատարեցնում էր Կաղ-Մքօին, նամանաւանդ որ
իւր խմբից էլ մի քանի մարդիկ՝ իրեն հետ կուելով՝ ար-
դէն թողել անցել էին Կարճ-Նազարի խումբը:

Այս միջոցներին Կ. Պրլիս էին գաղթել Մշի դաշտից
երեսուն ընտանիք, որոնց աննկարագրելի թշուառ վիճակից
խղճահարած՝ պատրիարքարանը կարգադրել էր, որ Ջանիկ
ամիրայի շինել աւած՝ նախկին ձեմարանում, որը գտնուում
էր ս. Կարապետ եկեղեցու մօտ, տեղաւորել այդ թշուառ-
ներին, մինչև մի գումար հաւաքելով, դրանց կրկին հայրե-
նիք վերդարձնելը: Այս ձեմարանը, որ մի տամնակ տարի
էլ գոյութիւն չէր ունեցել և քառամնակյան թւականներից
փակւած էր, դարձել էր մի տեսակ ազգային հիւանդանոց,
կամ իսկելիսկ մի տեսակ գերեզմանոց: Այդ անագին
եռայարկ շինութիւնից միայն չորս—հինգ սենեակ յառ-
կացրած էր թաղի վարժարանի համար, մնացեալ մեծ

մասը միշտ դարդակ էր. միայն աղէտներից յետոյ, երբեմն երբեմն այդտեղ ժողովուրդը մի առ ժամանակ պատըպարուում էր: Այնքան կարկատանի կարօտ էր, որ չէր կարելի այդտեղ երկար բնակել: Մի քանի սենեակներում մշտապէս ապրում էին ամենաթշառ ընտանիքներ, մէկ երկու սենեակ վերին յարկում պատրաստել էր թաղական խորհուրդը փրկիսփայ պ. Միսաքեանի համար, որը ժլատ սեղանաւորի նման, իւր անբաժան ահագին օտար լեզւեան գրադարանից ոչ ինքն էր օգտուում, և ոչ էլ ուրիշներին թողնում օգտուելու: Միւս սենեակներում էլ զառամեալ անտէր մուրացիկները, ժողովրդի ողորմութեան, կամ մահւան հրեշտակին էին սպասում:

Մշեցիք այդ շինութեան մէջ ղետեղւելուց յետոյ՝ տղամարդիկ բազար էին գնում մշակութիւնով, համալուծիւնով, օրական մէկ քանի սև փող ձեռք բերելու և կանայքն էլ այս ու այն տան մէջ ծառայութիւններ կատարելով՝ ուտելիքները ճարելու:

Կարճ-նազարը, որ միանգամայն ս. Կարապետ եկեղեցու թաղական խորհրդի անդամ էր, ինքն անձամբ ղետեղեց թշառ գաղթականներին ճեմարանի սենեակներում և, որովհետև առաջի օրերի համար ուտելու ոչինչ չունէին, իր գրպանից վճարելով, գնեց կենսական պիտոյքները: Նոյն գիշերն, իւր մօտ հրաւիրելով իր և իր հարեան թուումբաջիների խմբերի առաջնորդներին, նշանաւորներին, խնդրեց, որ իրեն աջակցեն, մի քիչ փող հաւաքելով, այդ մերկ ու առանց անկողնի մնացած թշառների վիճակը բարւոքել: Թէև Կաղ-Մքօն էլ հրաւիրած էր, բայց նա

մերժեց այդ հրաւերը և ինքն անձամբ իր թուումբաջիներին հրաւիրեց խորհրդի, միևնոյն ճեմարանում ապաստանած առաւօտեալներին օգնելու համար: Այնպէս որ երկու խումբն էլ միասին սկսեցին օգնութեան հասնել թշառներին:

Կարճ-նազարը, երբ հետեւեալ օրն արհեստաւորներ բերած՝ կարկատել էր. տալիս շինութեան ծակը-ծուկը, լուսամտաների վեղկերն ազակի գցելու համար և տանիքի կղմինդրը, որ չը կաթէ, շարած մնաց. որ կողմը դառնում էր նորոգութեան կարօտ էր գտնում և երբ քննութիւնը վերջացրեց, ասաց իր մտքումը՝ թէ ամեն կողմ փտած, խարխլած է, այնքան ծախս կը գնայ նորոգելու համար, որ այդ գումարով աւելի հեշտ կը լինի հիմքից քանդել և նորից շինել այս ճեմարանը:

Կաղ-Մքօն նոյն գիշերը գաղթականներին հագուստ ու ճերմակեղէն բաժանելիս, որոնք հաւաքել էր այդ օրը թաղեցիներից, ասաց ընկերներին.

— Ահա մի «Նոր Հայաստան», կայտաւ երեխաներ, վիթխարի և հաստաբաղուկ տղամարդիկ, գեղեցիկ աջբերով, կամիւր այտերով կանայք ու պառուներ, աղքատութիւն, մերկութիւն ամեն կողմ, յուսահատութիւն բոլորի աչքերի մէջ և սրտի խորքերում: Բայց և այնպէս այս ջլուտ որունքները, այս լայն կուրծքերը, այս հաստ ոտկոճերը, այս պինդ ուտերը մեզ՝ թուումբաջիներին համար շատ նախանձելի են, ես որանց կը քաշեմ դէպի մեր ջրհանները, Հարկաւոր է սրանց մարդ շինել, աներկիւղ թուումբաջիներ, որ համարձակ մտնեն հրդեհի բոցերի մէջ:

— Դու մի վախենալ, էֆէնդի, համայն ու մշակը բա-
նից չեն փախչել, հմա դու մեզ բան տուր, ասաց մի երի-
զասարդ, որ ինչպէս երևում էր, եղել էր մեծ քաղաքնե-
բում և կոնակը սովորել էր ծանր հակեր կրելու:

Կարծրամարմին մշեցիներից մի մասը մտաւ Կաղ-Մքօի
խումբը, միւսը Կարճ-Նաղարի: Որովհետև այդ հայրենիքից
հայաժամները երկու խմբից էլ անվերջ բարիքներ էին վա-
յելել, այդ պատճառով դէպի երկուսն էլ առձուռ էին ան-
կեղծ յարգանք: Կաղ-Մքօի նախագուշակութիւնը արգարաց-
րին աւերակ ձեմարանի թշուաքնակիչները և մերկաորունք
իւսկիւտարցի թուլումբաջիները սկսեցին յարգել իրենց
վախկոտ ու անսիրտ համարած ընկերակիցներին: Մշեցի
գաղթականների հրդեհների ժամանակ տարած յաղթանակ-
ներից սքանչացած՝ Կաղ-Մքօն ու Կարճ-Նաղարը սկսեցին
իրար ձեռքից խլել նորավարժ թուլումբաջիներին: Արդէն
հարեան բոլոր թուլումբաջիների խմբերը, թէև նախանձե-
լով, բայց անկեղծ խոստովանուում էին գաղթական թու-
լումբաջիների մեծ յաջողակութիւնները և այդ բոլորը վե-
րագրում էին Կարճ-Նաղարի ժրջան աշխատասիրութեան:
Կաղ-Մքօն աւելի ու աւելի կատաղում էր այդ բանը լսե-
լով, այնպէս որ նա էլ չկարողացաւ գայթակղ զսպել:
Մէկ անգամ նա, ս. Խաչ եկեղեցու բակում, ասաց մի պառաւ
կնոջ, որ Մէլամսըզի թուլումբաջիներն էլ չեն օգնել նրանց,
էլ հագնելիք ու վառելիք չեն տալ, քանի որ նրանց որդիքը,
իրենց խումբը թողնելով, անցել են Կարճ-Նաղարի թու-
լումբաջիների շրջանը մտել:


Այս բանի վրայ կատաղեց պառաւը և ասաց:

— Որ էդպէս է, դուք մեզի, ոչ թէ մեր խեղճութեան
ու աղքատութեան համար է, որ օգնում էք, հապա մեր ուսերի
համար: Լաւ, մենք էլ չենք ուզեր ձեր օգնութիւնը: Սրանից
յետոյ, մենք էլ ձեր դուռը չենք գալ ողորմութեան, մեր
զարդը կլտնք, կերերանք Կարճ-Նաղարի թուլումբաջիներ-
րին: Նրանք դեռ մարդու չեն հարցրել, թէ իւր որդին, որ
թուլումբաջիների շարքն է:

Պառան իր յամառութիւնով կարողացաւ դրացիներից
չատերին էլ քաշել Կարճ-Նաղարի կողմը: Կաղ-Մքօի թու-
լումբաջիների խումբը հեռոցհեռէ թուլացաւ, երբ մշեցի-
ների մեծ մասը հեռացան: Ընկերներից մի քանիսը, թէև
չէին կարողանում համարձակ Կաղ-Մքօի երեսին տալ իր
բռնակալութիւնը, բայց կողմնակի կերպով հասկացնում
էին: Հրդեհների օգնութեան շատերը չէին գնում, շատերը
ուշանում էին, շատերն էլ նրա անտեղի նկատողութիւն-
ներից վրդովւած՝ թողնում փախչում էին:

Աւելի խորշում էին նրանից, որ հրդեհների ժամանակ
իր կատարած սխալները չէր յանձն առնում և յանցանքը ու-
րիշների վրայ էր բարդում:

Այդ միջոցին երեք չորս ամսով հիւանդացաւ Կաղ-
Մքօն և չկարողանալով դիմադրել ընկերներին, Մէլամսըզի
թուլումբաջիների խմբադեհտութեան սաշտօնը յանձնեց Լալ-
Մարգարին, իւր ամենահսկատակ ընկերոջը: Խմբադե-
տից դժգոհ թուլումբաջիները կարծեցին, որ այժմ հնա-
բաւոր կը լինէր հաշտել Կարճ-Նաղարի հետ, բայց Լալ-
Մարգարը առանց Կարճ-Նաղարի հարկի՝ քայլ անգամ չէր
առնում, այնպէս որ թուլումբաջիները աններ էր արձակում
հիւանդ էրս-
Կարճ-Նաղարի ժամանակ աղէտների



առաջն առնելու համար: Այնպէս որ այդ ժամանակները միայն անունով, չորս ջրհանով ու գործիքներով գոյութիւնը պահպանում էր Սէլամսրդի խումբը, անդամներից որը մտել էր մօտակայ ուրիշ խմբեր, որը ետ էր քաշւել, որն էլ սպասում էր, որ իրենց անփութարինելի առաջնորդը առողջանայ, որպէսզի կրկին ձեռք զարկեն գործին:

Այն ինչ Կարճ-Նազարը տիրապետում էր թաղերին, գնդակի նման հասնում էր ամեն կողմ, առանց դժարութիւնների հանգցնում էր հրդեհած տները, օգնում էր թշուառներին և դէպի իրեն գրաւում ժողովրդի սիրտը: «Տիեզերքում», ուրիշ լրագրիներում ամեն մարդ կարգում էր նրա և նրա թուլումբաջիների քաջասրտութեան և արիաջանութեան նկարագրութիւնը: Ամեն մարդ ախամայ խոնարհում էր նրա հաստատակամութեան առաջ և ամենքը հիանում էին նրա արիաջանութեամբ: Կ. Պոլսի ամեն շրջանում, ամեն թուլումբաջիների օջախում նսեմացաւ Կաղ-Մքօի անունը, որը մի ժամանակ ամեն տեղ խօսակցութեան հերոս էր հանդիսացել և համարեա թէ սկսեցին նրա գոյութիւնը մոռանայ անգամ:

Մի օր Կաղ-Մքօն, դեռ նոր կազդուրած, կարգաց լրագիրներում հետեւեալ լուրը. «Ինչպէս շում ենք, «Տիեզերք» լրագրի մեծանուն խմբագիրը, որի հերոսական արարքների մանրակտիտ պատմութիւնը հանրածանօթ է Կ. Պոլսի բոլոր ընթերցող դասին, վերջերս մէկ նոր հասարակական ձեռնարկութեամբ անմահացուցել է իր անունն անօրինակելի անշահասիրութեամբ: Պարոնք՝ Բաղլար-Բաշի ունեցած մեծ այգին և մէջը գտնուած երկյարկանի

ահաւոր տունը նւիրել է յօգուտ որբանոցի, որը բացել է աղէտներից վնասուած անտէր այրիների և որբերի համար»:

— Կովեր, ոչխարներ. նա այդ անելով, ցանկանում է կուռք դառնալ ու ձեզնից պաշտել, ասաց կատաղած Կաղ-Մքօն, և դուք յափշտակած դեռ խնկարկում էք այդ խորամանկ դերասանը: Այն հարստութիւնը, որ հայրը ձեր կռնակներով էր վաստակել, այսօր որդին հօր դիպածից չնչին մի մաս բերոներդ թապելով, շլացնումէ ձեզ և ձգտում թիկունքներիդ, վզերիդ վրայ բարձրանալ:

Այդ միջոցին ցրւելը դուռը բացեց և մի համար «Արեւելք» տալով՝ արագ-արագ միւս լրագիրների անունները արտասանեց.

— Լրագիր այսօրւայ — «Հայրենիք», «Մասիս», «Մանգումէ», «Թէրջիմանի — էֆքեար», «Մէճմուա», «Փունջ», «Արեւելեան-Մամուլ», «Լա Թիւրքի», «Սթամբուլ», «Փար դը Բոսֆոր», «Վազրդ», «Հագիրգաթ»...

— Պէտք չէ, Պօղոս աղբար, պէտք չէ:

— Թուլումբաջիների համար հետաքրքիր լուր կայ «Փար դը Բոսֆորի» մէջ:

— Ուղիղ. տեսնենք.

Յրւիշը տեսց ու հեռացաւ: Կաղ-Մքօն սկսեց աչքից անցկացնել «Արեւելքը»: Յանկարծ կանգ առաւ և մռնչելով հետեւեալ տողերը կարդաց.

«Ամսիս 29-ին Գատը-գիւղի յոյն և հայ թուլումբաջիներն, իրենց Իսկիւտարի արհեստակիցների պատւին տուած ճաշկերոյթին, «Տիեզերք» լրագրի մեծ. խմբագիրը

ձայն խնդրելով մի ճառ խօսեց, որը ժամից աւելի տեւեց: Ճառախօսն իրեն նիւթ ընտրած էր, մի կապով միայնել Կ. Պոլսի բոլոր թուրումրաջիների խմբերը, որպէսզի հարկին, մեծամեծ աղէտների ժամանակ, կարողանան դօրեղ ուժով գիմարել: Մեծ ոգևորութեամբ և ծափահարութիւններով ընդունեց ճառը և միաձայն վճռեցին. յաջորդ ամսի մէկին հաւաքել դարձեալ Գատը-գիւղ՝ ծրագրի կազմելու նպատակով:

— Գարձեալ մի նոր խնդ, դարձեալ աչքակապութիւն: Ո՛հ, ս՛հ, ս՛հ, կաշառակուլ խմբագիրներ, կոյր առաջնորդներ, փառաբանեցէք, հռչակեցէք, կուրացրէք ամբօխը, ասաց մունչելով Կաղ-Մքօն, նստեց ու բացեց «Փար դը Բոսֆորը»: Աչքը այս ու այն կողմը թերթելուց յետոյ, միևնոյն լուրը կարգաց, աւելի ընդարձակ: Քիչ յետոյ գրիչը վեր առաւ և մի հրաւիրագիր գրեց ժողովի համար, որի տակը մի տասն անուն նշանակելուց յետոյ՝ սկսեց մտածել: Նա տատանուում էր և չէր իմանում, էլ ում կանչել: Գրիչը դնում էր թղթի վրայ և վերցնում: Վերջապէս նա մի վաթսուն, եօթանասուն անուն գրեց և վարժատան ծառային տալով պատւիրեց, որ մինչև իրիկուն ամենքին ասնի, ստորագրել տայ, կամ յայտնէ, որպէսզի անպատճառ գիշերը ժողովի գան:

Իրիկան ժամը ութին, ամենից առաջ ժողով եկաւ Լալ-Մարգարը: Կաղ-Մքօն սպասում էր անհամբեր, ականջ էր դնում, բայց ոչ եկող կար, ոչ էլ դուռը բաղսող: Վերջապէս ժամը իննի մօտերը եկան Մարտիրոսն ու Մանուկը: Կաղ-Մքօն կատաղել էր, չէր իմանում ի՞նչ խօսքերով հայ-

հոյի դաւաճան ընկերներին: Եկաւ ծառան էլ, աւեց հրաւիրագիրը Կաղ-Մքօին, որը մի քանի ածականներով ճամբեց նրան ու ներս մտնելով՝ սկսեց աչքից անցկացնել հրաւիրւածների անունների գիմաց գրւածները. «Չեմ կարող գալ», «տանը հիւանդ ունիմ», «ի՛նձ մի սպասէք», «ես յուսահատուած եմ ձեր բռնակալութիւնից», «լսեցի», «ուրիշ տեղ խօսք եմ տւած վաղօրօք», կայլն կայլն...

Կաղ-Մքօն կատաղութիւնից փետտում էր գլխի մագերը և կրծում պէխերի ծայրը:

— Կարծում եմ ժամանակ է, արդէն ժամը տասնի մօտ է, ասաց Լալ-Մարգարը, կարող եմք ժողովը բաց անել:

— Չորս հոգով ի՛նչ ժողով էք բաց անելու, ասաց Մանուկը, յետաձգենք երեք օր և աշխատինք, որ անդամներից գոնէ մի քսան, երեսուն հոգի գան: Ինչի է նման չորս հոգու ժողովը, յսողները ի՛նչ կասեն, այնպէս գործ բռնենք, որ նշանակութիւն ունենայ և չասեն— ինչ որ մտածել են, այն էլ վճռել են:

— Ոչ Մանուկ, ս՛չ. չարժէ այդ մարդիկը ժողովի հրաւիրել: Աւելի լաւ է միս մէնակ մնալ, քիչ ուժով գործել, քան թէ այնպիսի մարդկանցով շրջապատել, որոնք արտաքին փայլից շանալով, պատրաստ են դաւաճանելու:

— Ես համոզւած եմ, որ մեր ժողովը, թէև քչուր, բայց օրինաւոր է, քանի որ մենք մեր թագեցիներին, մեր դրացիների բարիքը մտածելու համար ենք հաւաքւած և աղէտների առաջը առնելն է մեր նպատակը: Կոյր է ամբօխը, կոյր են մեր թուրումրաջի ընկերները, որոնք թողնում են իրենց թաղի թուրումրաջիների դրօշակը և անցնում տրիչ-

ների կողմը: Քայց մենք էլ չենք կարող կուրանալ և թողնել այս սուրբ գործը: Իմ հիւանդութեան ժամանակ թուլացել էր մեր գործը, այժմ ես առողջ եմ, կը կաշեմ գործին, յոյս ունիմ, որ շուտով մենք դարձեալ կը դօրեդանանք և անպատճառ կը յաղթանակենք: Ժամը արդէն տասն էլ անցաւ, աւելորդ խօսակցութիւնը թողնենք, անցնենք գործին:

—Պարոններ, ասաց Լալ-Մարգարը լուրջ կերպարանք տալով իր դէմքին, մեր խմբապետն արդէն կազդուրել է, ես խնդրում եմ, որ ինձ ժամանակաւորապէս յանձնած պաշտօնը յետ առնելով, դարձնէք նրան: Ես պատրաստ եմ միշտ...

—Խնդրում եմ, խնդրեմ, պ. Մարգար, այդ հարցն առաջ բերելու ժամանակը չէ, միթէ այդ բանը կտրուրագոյնն է մեր այս գիշերւայ գործի համար: Գու՛ կամ ես, միթէ միկնոյնը չէ՛, մեզ համար գործն է կարևոր և ոչ թէ գործող անունները: Այդ հարցը դնելն ես, աւելորդ եմ համարում, բացակայ ընկերների իրաւունքները չըռնաբարելու համար: Գուցէ մեզնից մի ուրիշ արժանաւորը կը գտնեն:

—Քայց ձեր անունը, ձեր անունը նորից ոյժ կը տայ խմբին, ասաց Լալ-Մարգարը. իսկ Կադ-Մքօն դարձեալ խօսքը կտրեց.

—Անուններին նշանակութիւն մի տաք, պարոններ. ես գործի մէջն եմ. այդ արդէն բաւական է, խմբապետ թէ ջրկիր, այդ մի և նոյնն է:

—Առ այժմ մնայ այդ ընտրութիւնը, ասաց Մանուկը և հարցը վերջացրեց:

—2ը գիտեմ, ինչպէս բացատրել ընկերների վարմունքը, մեր սրտակիցներն անգամ փայլում են այսօր իրենց բացակայութեամբ: Նշանակում է մենք ընկերներ չենք ունեցել, այլ բախտախնդիրներ, որոնք միայն անձնական փայլի, կամ շահի համար են մեզ շրջապատած եղել: Այս բանը թէ և յուսահատական է երևում ձեզ, բայց ինձ համար մի ուրախալի երևոյթ է. ես արդէն շատ վաղ հասայ այն եղրակացութեան, որ ամենախիստ ընտրութիւն պէտք է անել ընկերների մէջ. թող փոքր լինինք թուով, բայց մեծ սրտով ու հոգով: Մեզ ընկեր և համախոհ կարծածները՝ շացած Կարճ-Նաղարի էֆէկտներից՝ թուլացան, հեռացան և այսօր նրա հետ ժողոված են Գատը-դիւղում, յոյների, հրէաների, ալբանացիների, նոյն իսկ թուրքերի հետ և ծափահարում են նրան: Գործի պաշտօններ չէին նրանք, կուռք պաշտելով էլ թող մեռնին: Ահա թէ ս'ւր են, ահա թէ ի՛նչի մեր ժողովն այսբան սահմանափակ է:

—Եանդուն վա՛ր, եանդուն վա՛ր, (հրդեհ կայ), սկսեցին պոռալ-փողոցում:

—Մարտիրոս, իջիր, իմացիր, որտեղ է, ասաց Կադ-Մքօն: Փողոցներում գոռում էր մունետիկը և անցնում:

—ձեմարանում կրակ է ընկել և սոսկալի կերպով տարածել, ասաց հաւաքով Մարգարը, սանդուխներից բարձրանալով:

—Գնանք, գնանք, ասաց Մանուկը:

—Ո՛ւր էք գնում, ս'ւր էք վազում, ասաց դայրալի Կադ-Մքօն:

—Երթանք, մի քանի մարդ կանչենք ու թուլում-բաներն (Չրհան) առնենք հասնինք:

— Լաւ է, տեղդ ծանր կեցիր, հիմի Կարճ-Նազարի տղերքն ամեն կողմից թափւած կլինին: Նրանք մշեցիների, ձկնորսների հետ, իրենց թաղի մէջ չեն թողնել, որ դուք երեք հոգով քաջագործութիւն անէք: Ձեր օգնութեան կարօտ չեն:

— Բայց և այնպէս...

— Մարգար աղբէր, թէ՛ դ, երթանք, դուռը բաց, թուլումբաները տուր, մեր տղերքը, մեր ճղերը, մեր մանր ու խոշորը վառւեցան:

— Տղա Գալօ, այդ ո՞ր տեղ է ձեր ըէխ (խմբապետ)՝ Կոլատ-Նազարն, ո՞ր են ձեր թուլումբաները, ասաց Կաղ-Մքօն:

— Վալլահ, վարժապետ չեմ գիտէր, այդ խօսքերի վախառ չէ, երթանք, թուլումբաները տւէք, տղերքը ժամի բակում ձեզ սպասում են: Թէ՛ դ, թէ՛ դ: Նազար էֆէնդին, ասում են Ղաղիբօյ է գնացել, ուռմըների հետ խորհրդի. բալիքներն էլ նրա ընկերների ձեռին է, որոնք հետն են: Արիք, երթանք, ճամբէն կխօսինք: Թէ՛ դ արէք, շտապեցէք, կոտորւեցինք, կրակը տունն առեր ու բոցավառւում է ողջ ձեմարանը:

-- Ահա, տեսնո՞ւք ձեր ըէխն, մեզ թողիք, գնացիք, հիմա էլի մեր ումուդին մնացիք: Մենք մարդ չունինք, ի՞նչ անենք, ինչպէ՞ս անենք...

— Վարժապետ, թէ՛ դ արէք, մեր քիւֆաթն հիմա խոլովաւ, մեր մարդիկը հաղիւր են, նրանք կանեն, ինչ որ պէտք է: Հազար հեղ ասի, — Նազար էֆէնդի, Մքօ վարժապետ, այդ թուլումբաներից մէկն այն տեղ թողէք, ամմա՛ս ո՞վ է լսողը: Ղօջա ձեմարան է, ինչ խանի խարարա է, հազար ծակ ունի, մէկ քիւնջը (անկիւն) չէիք կարող տեղաւորել:

Նա գնացել է Ենիմէհլէի էն ծայրը, սա Սեւամուրզի մէջ, հիմա նեղ փողոցներից մենք ինչպէս անցնենք թուլումբաները ու հասնենք մեր քիւֆաթն ազատենք: Ամմա մեզ մարդու տեղ դնող չկայ, մեր ուսերն են պէտք, ոչ թէ մենք...

— Ետև էլ կասեն, Կօլատ-Նազարի մարդիկը հանգցրին կրակը, ասաց Կաղ-Մքօն:


— Ասածու սիրուն, վարժապետ, ես կը բռնամ, որ Կաղ-Մքօի թուլումբաներով, Կաղ-Մքօն մարեց կրակը: Երթանք, երթանք:

Սկսեցին բոլորը միասին վազել: Բայց մինչև դռների փականքները բաց անելը, մինչև գործիքների տալը, մինչև հորերից ջուր քաշելը՝ ձեմարանի կրակը սաստկացաւ և էլ հանգցնելու հնար չեղաւ: Հին շինութիւն, ներքին յարկի աղիւսի պատից մինչև կաուրի կլմինտը շինւած էր մարխոտ չամ փայտից, որը շորացել էր և այրւում էր վառօդի նման: Մինչև Ս. Խաչ եկեղեցու բակից թուլումբաները փոխադրեցին ձեմարանի բակը, մինչև Գատը-գիւղից իմացան ու օգնութեան հասան Կարճ-Նազարի մարդիկը, շինութիւնը մոխիր դարձաւ և միջի բնակիչներից մեծ մասը խան-ձեցան այդ մոխրի կոյտի տակ:



dem Lande ist die Frucht in 6 Wochen im Herbst
 zu sein und zu dieser Zeit die Frucht zu ernten
 ist die beste Zeit. Die Frucht ist die beste
 zu ernten in der Zeit der Reife. Die Frucht
 ist die beste zu ernten in der Zeit der Reife.

Die Frucht ist die beste zu ernten in der Zeit
 der Reife. Die Frucht ist die beste zu ernten
 in der Zeit der Reife. Die Frucht ist die beste
 zu ernten in der Zeit der Reife. Die Frucht
 ist die beste zu ernten in der Zeit der Reife.



ՀՀ Ազգային գրադարան



NL0657782

ՀՀ Ազգային գրադարան



NL0657781

ՀՀ Ազգային գրադարան



NL0657780

ՀՀ Ազգային գրադարան



NL0657779

ՀՀ Ազգային գրադարան



NL0657778

ՀՀ Ազգային գրադարան



NL0657777

ՀՀ Ազգային գրադարան



NL0657776

